



Ազդարարության Trumpet's Sound **փող**

55-րդ ՏԱՐԻ, ԱԲՏՐԱԼԻԱ
ՄԱՅԻՍ - ՅՈՒՆԻՍ 2024





Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցի ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH

BI MONTHLY CHRISTIAN PUBLICATION
PUBLISHED BY THE
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
112 SAILORS BAY ROAD, NORTHBRIDGE,
NSW 2063 Australia

PASTOR HRATSH KIUJIAN
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
PO BOX 1593, CHATSWOOD NSW 2057
email: pastor@armenianbrethren.org
URL: www.acmaust.org

«ԱԶԳԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՎ ԵՐԿԱՄԱԿԱ ՔԵՐՔՐԸ ՍԻՂՆԵՅԻ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ԵԿԵՂԵՑՈՒ ԻՐԱՏԱՐԱՐԿՈՒՅՈՒՄՆԵՆ Է: Պատասխանատու խմբագիր՝ Իոզիլ Հրաչ Գույունյան:

Այս թերթը անվճար բաժանվում է հայրենիքում: Ցանկացողները կարող են դիմել նշված հասցեով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ո՞ր ես աղբատները Յովիլ՝ Հրաչ Գույունյան

Այս անգամ էլ ինչպե՞ցի թե՞ Քաղված

Մարգարեություններ Հիսուսի մասին. Լա Է Մեսիան. Ձորջ Հաուբ

Ապաստանի համար մեր առջև դրված հույսից կառչենք . Քաղված

Հոգեպարար կարկանդակ. Քաղված

Հագարամյա սուրբ քաղաքը, Կենաց գետը
և վերջին պատգամներ (4). QMBC պանորամա

Աստծո սերը, աշխարհի ատելությունը Դոկտ.՝ Փոլ Ուայթինգ

Աղոթքի մեջ պարզամտություն Քաղված

Ո՞ւմ կողմում ենք մենք Վեր. Հովսեփ Հովսեփյան

ACM-ը՝ Հայաստանում Դոկտ.՝ Դանիել Ձեյմս

Ո՞ր էն աղքատները

Մի քանի տարի առաջ, երբ Հայաստանում էի, մարդասիրական կազմակերպության մի ներկայացուցիչ զանգահարեց ինձ ու Հայաստան այցելելու փափագ հայտնեց՝ աղքատների վիճակը գնահատելու համար: Նա հեռավոր Աֆրիկայից եկավ Երևան:

Միասին Վանաձորի գյուղերից մեկը այցելեցինք, որտեղ մարդիկ մետաղյա տնակներում էին ապրում: Այս տնակներն ավելի քան 30 տարի է՝ այնտեղ են: Դրանք ամբողջովին ժանգոտված ու քայքայված էին: Մարդիկ կատարյալ չքավորության մեջ էին:

Պայմաններին ծանոթանալուց հետո այցելուն ասաց, թե սա իր տեսած ամենավատ վիճակն է: Չարմացա՝ մի՞թե հնարավոր է, որ Աֆրիկայից եկած այցելուն այդպես ասի: Նա պատասխանեց. «Եթե ձմեռը ջերմաստիճանը 30-ից ցածր է, իսկ ամառը՝ 40-ից բարձր, ապա ինչպե՞ս են ապրում այս մարդիկ»:

Խնդիրը միայն Հայաստանում չէ: Ամեն գիշեր ավելի քան 800 միլիոն մարդ քաղցած է մտնում անկողին: Անցյալ տարի այս թիվը ավելացավ 46 միլիոնով: Ո՞վ է պատասխանատու: Ավստրալիայում բոլորս հարմարավետ պայմաններում ենք, սակայն Աստվածաշունչը մեզ ի՞նչ է սովորեցնում, Տեր Հիսուսն ի՞նչ սովորեցրեց:

Ղուկ. 16:19-31-ում կարդում ենք մեծահարուստի և աղքատ Ղազարոսի պատմությունը: Մեծահարուստն ապրում էր իր պալատում և ամեն օր իր դարպասների մոտ նստած աղքատներին էր տեսնում: Աղքատ Ղազարոսն ամեն օր այնտեղ էր՝ հույս ունենալով մեծահարուստի սեղանից ընկած փշրանքներով փորը լցնել:

Ես հավատում եմ, որ Աստված յուրաքանչյուր հարուստ մարդու դռան առջև աղքատ Ղազարոս է դրել: Նրանք այնտեղ են, որպեսզի մենք հոգ տանենք նրանց մասին:

Պատմությունը շարունակվում է՝ ասելով, որ աղքատը դրախտ գնաց, իսկ հարուստը՝ դժոխք: Նա դժոխք չգնաց հարուստ լինելու պատճառով, այլ քանի որ աղքատներին երբեք հոգ չէր տարել, երբեք

չէր սիրել իր եղբորը: Նա դժոխք գնաց՝ Աստծուն չհնազանդելու համար:

Ո՛վ է ձեր դարպասի մոտ գտնվող աղքատը: Արդյոք օգնության ձեռք կմեկնե՞ք: Արդյոք կհետևե՞ք Հիսուսի պատվիրանին՝ սիրել եղբորն անձիդ պես:

Հ. Գ.



Այս անգամ էլ խնայեցի քեզ

*«Ահա գալիս ենք դեպի քեզ, որովհետև Դու ես մեր Աստվածը, ո՛վ Տեր»
(Երեմ. 3:22)*

Չարդ Ուելյենդը՝ 60 տարեկան մի ծերունի, իր կյանքի մեծ մասն անցկացրել էր ծովի վրա: Նա մեծացել էր անաստված ընտանիքում, և պատանեկության ընկերները սխալ ճանապարհներով էին առաջնորդել նրան: Ձմեռվա մի գիշեր նրա ձկնորսական նավը, որ ծովեզերքից շատ չէր հեռացել, տարօրինակ փոթորկի հանդիպեց: Քամին այնքան սաստիկ էր փչում, և այնքան սարսափելի էին նավին հարվածող ալիքները, որ Ուելյենդն ամբողջ կյանքում առաջին անգամ իմացավ, թե ինչ է վախենալը: Երբ ղեկանիվի մոտ էր և ամեն ջանք ի գործ էր դնում, որ նավի գլուխը դեպի քամին դարձնի, մեծ ալիք բարձրացավ և սաստկությամբ հարվածեց նավին ու Ուելյենդին նետեց ծովի ջրերի մեջ:

Մեկ րոպե անց Ուելյենդը ծովում մաքառում էր իր կյանքի համար: Լողալ անկարելի էր, քանի որ ալիքները հարվածում էին նրան կարծես սպանելու նպատակով: Քիչ հետո զարմանալի դիպվածով ալիքները նրան տարան մի տեղ, որտեղ նավից կախված պարան կար: Նա իր հուսահատական ջանքերով բռնեց պարանը և փաթաթվեց դրան՝ իբրև կյանքի ազատման միակ միջոցի: Երբ բռնել էր պարանը, մեղմ ձայն լսեց, որ ասում էր. «Այս անգամ էլ խնայեցի քեզ»: Բառերն այն-

քան հստակ էին, որ շարունակ կրկնվում էին նրա մտքում: Երբ փոթորիկը հանդարտվեց, և նրանք նավահանգիստ հասան, այս բառերը շարունակեցին հնչել նրա ականջներում և սրտում. «Այս անգամ էլ խնայեցի քեզ»:

Երբ ցամաք հասան, լսեց, որ երկու ձկնորսների նավակներ են խորտակվել, և նրանց նավաստիները կորել են ծովի ջրերում: Երբ տուն էր գնում, թվում էր, թե այն ձայնն ավելի բարձր է հնչում. «Այս անգամ էլ խնայեցի քեզ»:

Ընկերներից ոմանք գինետուն հրավիրեցին իրեն, որպեսզի իր փրկվելու համար ուրախանան: Բայց նա գինետուն չգնաց: Կար մի բան, որ չէր կարող նկարագրել. քայլերը նրան հոգևոր ժողովի առաջնորդեցին: Այնտեղ՝ աղոթողների խմբակի մեջտեղում, ոտքի կանգնեց և իր ազատման զարմանալի պատմությունը պատմեց՝ կրկնելով այն բառերը, որոնք հնչում էին ականջին: Հետո հասկացավ, որ իրեն ազատողն Աստված էր, և Աստծո ձայնն էր, որ ինքը լսեց ծովի ջրերում:

Նրանք միատեղ աղոթեցին: Աստվածավախ այդ փոքրաթիվ խումբը և Չարլզ Ուեյլենդն այդ գիշեր հասկացան Աստծո սերը և Տեր Հիսուս Քրիստոսի ձրի շնորհը. նա առաջին անգամ իմացավ, որ մեղավոր է, և զարմացավ, որ Աստված խնայել է իրեն, երբ ուրիշներն աշխարհից վերցվեցին:

Միբելի՝ ընթերցող, Աստված քանի՞ անգամ է ստույգ մահից ազատել քեզ: Ի՞նչ վիճակում կլինեիր, եթե անցյալում մահանայիր: Գիտե՞ս՝ Նա ուզում է, որ սպաշխարես, Իրեն դառնաս և փրկվես: Արդյոք ուզո՞ւմ ես Իրեն դառնալ այսօր:

Քաղված՝ «Ընտիր ժողովածու հոգևոր պատմությունների» գրքից



Մարգարեություններ Հիսուսի մասին. Նա է Մեսիան

Աշխատավայրում մարդիկ պաշտոններ են զբաղեցնում, ինչպիսիք են՝ տնօրենի, ղեկավարի կամ տեղակալի պաշտոնը: Չարից III-ը, նախագահ Բայդենը և Թուրքիայի նախագահ Էրդոգանը հայտնի են որպես թագավոր, նախագահ և փարավոն:

Արդյոք գիտե՞ի՞ք, որ Հիսուսն աշխատանքային պաշտոն ուներ: Այն խաչի վրա դրված գրությունը չէր. «Մա է Հիսուսը՝ հրեաների թագավորը»: Նա ճանաչված էր որպես Զրիստոս, Մեսիա կամ Օծյալ:

Հին Կտակարանում եբրայերեն «օծել» բայը նշանակում է ինչ-որ մեկին առանձնացնել մարգարեական, քահանայական կամ թագավորական պաշտոնի համար: Օրինակ՝ Սամուելը Դավթին օծեց որպես թագավորի (Ա Թագ. 16:1-13): Եղիան Եղիսեին օծեց որպես մարգարեի (Գ Թագ. 19:16): Մովսեսը Ահարոնին ու նրա որդիներին օծեց որպես քահանաների (Ելից 30:30, Ղևտ. 8:10-12): Օծողը ձիթապտղի անուշահոտ յուղը թափում էր օծյալի գլխին (Ելից 30:22-32), որպեսզի ցույց տար, թե օծյալն առանձնացված կամ սրբված է Աստծուն ծառայելու համար: Այնուհետև օծյալը խոսում էր, ծառայում կամ ղեկավարում էր որպես Աստծո ներկայացուցիչ ժողովրդի մեջ: Օծությունը հանրային արարողակարգի մաս էր, որի ընթացքում բոլոր ներկաները հասկանում էին, որ Աստված ընտրել է այս մարդուն հատուկ առաջադրանքի համար: Դավիթը հրաժարվեց Սավուղին վնասելուց, քանի որ Սավուղը «Տիրոջ օծյալն էր» (Ա Թագ. 24:6-7):

Դան. 9:25-26-ում կարդում ենք, որ Դանիելը Գաբրիել հրեշտակապետի կողմից հայտնություն ստացավ գալիք իշխանի մասին, որը «Օծյալ» կամ «Մեսիա» պիտի կոչվեր և որը մահապատժի պիտի ենթարկվեր: Անգլերեն «Christ» բառը հունարեն «օծյալ» գոյականից է սերում: Այսպիսով՝ «Օծյալ», «Մեսիա» և «Զրիստոս» բառերը նույն նշանակությունն ունեն:

Երբ Հիսուսը Նագարեթում էր, կարդաց Եսայի 61:1-2ա հատվածը.

«Տիրոջ Հոգին Իմ վրա է, որովհետև Նա Ինձ օծեց աղքատներին ավետարանը քարոզելու, Ինձ ուղարկեց սրտով կոտորվածներին բժշկելու, գեղիններին փրկություն քարոզելու և կոյրերի աչքերը բանալու, ճնշվածներին ազատելու, Տիրոջ ընդունելի տարին հռչակելու» (Ղուկ. 4:16-21): Այնուհետև ասաց. «Այսօր այս գրվածքը կատարվեց ու ձեր սկանչնեքով լսեցիք»: Նա Եսայու մարգարեության այս հատվածը Իրեն վերագրեց՝ ասելով, որ Ինքն է այդ Օծյալը, որի մասին նկարագրված է Եսայու մարգարեության մեջ, որպես Մեկը, ով կարող է լուծել իրենց բոլոր խնդիրները: Նա նաև սամարացի կնոջն ասաց, որ Ինքն է խոստացված Մեսիան (Հովհ. 4:25-26): Իհարկե, Նա յուրով օժված չէր, այլ Սուրբ Հոգով (Գործք 10:37-38):

Ե՛վ Հիսուսը, և՛ Պողոսը Հին Կտակարանի գրություններից սովորեցրին, թե Հիսուսն է այն Մեսիան, որը պետք է մահանար ու մեռելներից հարություն առներ (Ղուկ. 24:46, Գործք 17:2-3): Երբ Պետրոսը հայտարարեց, որ Հիսուսը Քրիստոսն է (կամ Մեսիան), Տերը հրամայեց աշակերտներին ոչ մեկին չասել, քանի որ հրեաներն առաջնորդ էին փնտրում, որպեսզի իրենց ազատեր հռոմեացիների լծից: Փոխարենը Հիսուսը Ինքն Իրեն ներկայացրեց որպես Մարդու Որդի: Բայց ավելի ուշ՝ դատավարության ժամանակ, Հիսուսը քահանայապետին ասաց, թե Ինքը Մեսիան է (Մարկ. 14:61-62):

Հիսուսը կատարեց մարգարեի, քահանայի և թագավորի պաշտոնը: Իր պաշտոնը աստվածային կերպով էր նշանակված: Որպես Մարգարե՝ Իր ուսմունքը Հայր Աստծուց էր (Հովհ. 7:16): Որպես քահանա՝ Նա հաշտեցրեց մեզ Աստծո հետ ու հիմա բարեխոսում է մեզ համար (Եբր. 7:21): Որպես Թագավոր՝ Նա իշխում է՝ Աստծո աջ կողմում նստած (Փիլիպ. 2:9-11): Նրա դերը նախանշված էր Հին Կտակարանի Իսրայելի մարգարեների, քահանաների և թագավորների կողմից:

Մեսիան օժվեց նախևառաջ Իր ժողովրդին իրենց մեղքերից ու սատանայից փրկելու համար (Հովհ. 8:31-36): Նա իրագործեց այս փրկությունը Իր մահվամբ ու հարությանբ (Հովհ. 12:32, Հովհ. 3:16): Ապագայում Նա ազատելու է Իր ժողովրդին իրենց ֆիզիկական թշնամիներից, երբ երկրի վրա հաստատի Իր թագավորությունը (Եսայի 9:1-7):

Հին Կտակարանում կարդում ենք, որ Մեսիան խոստում ունի Իսրայելը վերականգնելու և ողջ աշխարհի վրա արդար թագավորություն հաստատելու, որը պիտի ղեկավարվի Դավթի սերնդի կողմից (Երեմ. 33:6-26): Քրիստոսի երկրորդ գալստյան և Հազարամյա թագավորության ժամանակ Նրա դերը՝ որպես Թագավոր, ակնհայտ կլինի բոլորի համար:

Աղոթք

Հայր Աստված, շնորհակալություն ենք հայտնում Հին Կտակարանի մարգարեների, քահանաների, թագավորների և Մեսիայի խոստման համար, ով իրականացրեց այդ պաշտոնները: Շնորհակալ ենք, որ Հիսուսին ուղարկեցիր որպես Օծյալի, Մեսիայի և Քրիստոսի. Նա եկավ, որպեսզի հոգևորապես փրկի մեզ՝ Իր վրա վերցնելով մեր արժանի պատիժը: Սա բարի լուր ու փրկություն է բոլորիս համար: Մենք շնորհակալություն ենք հայտնում Քեզ, որ Նա աշխարհ եկավ որպես Մարգարե և Քահանա, և խոստում ունի մի օր վերադառնալու որպես Թագավոր: Փառք ենք տալիս Քեզ, որ կարող ենք այսօր ծառայել Նրան՝ որպես մեր կյանքի Տիրոջը: Քրիստոսի անունով, Ամեն:

Ջորջ Հաուլք

«Ապաստանի համար մեր առջև դրված հույսից կառչեցինք...» (Եբր. 6:18-19)

Միսիսիպի գետով անցնող նավը հանկարծ անկառավարելի դարձավ. շարքից դուրս եկավ դեկը, և նավապետն անգոր էր լուծելու իրավիճակը: Անձնակազմը չկարողացավ դիմակայել գետի ուժեղ հոսանքին, և նավը մխրճվեց ափի մեջ՝ վնասելով մի քանի տուն: Խառնաշփոթ առաջացավ. շատերը վիրավոր էին: Եթե խարիսխը ժամանակին իջեցնեին, վթարը տեղի չէր ունենա: Սակայն խարիսխը նույնպես վնասվել էր:

Մեր կյանքն էլ կարող է դուրս գալ մեր վերահսկումից: Մեզ ճնշում են վատ լուրերը, մենք մտահոգվում ենք դժվարությունների մասին, վախենում ենք հիվանդանալուց և այլն: Հավանաբար տեսնում ենք, թե ինչպես է ամեն ինչ փլվում մեր շուրջը:

Ինչպե՞ս ենք արձագանքում դրան: Աստծո Խոսքը յուրաքանչյուր մարդու առաջարկում է ապահով և անշարժ խարիսխ, որը վստահելի է և երբեք չի թողնի վատ իրադրության մեջ: Դա *«մեր առջև դրված հույսն է»*, որը տրված է բոլոր նրանց, ովքեր հավատում են խաչի վրա մահացած Հիսուս Քրիստոս Փրկչին:

Երբ դժվարություններ են առաջանում, քրիստոնյաները կարող են հիշել հիանալի խարիսխի մասին՝ որպես Տեր Հիսուսի հետ ապահով ապագայի երաշխիքի:

Աստված ուզում է, որ փրկվածները հասկանան, թե որքան ամուր է այս հույսը: Այն երաշխավորում է, որ իրենց կյանքը դուրս չի գա վերահսկումից: Դրա համար Պողոս առաքյալը գրել է. *«Եվ այդպես հավիտյան Տիրոջ հետ պիտի լինենք: Ուրեմն, միսիջարեցե՛ք միմյանց այս խոսքերով»* (Ա Թես. 4:17-18):

Քաղված

Հոգեպարար կարկանդակ

Բ Պես. 1:3-9

Աշխարհի սկզբից ի վեր ուտեստեղենը հրապուրել է մարդ արարածին. սնունդն անհրաժեշտ է գոյատևելու համար: Առողջ ապրելու համար սննդարար կերակուր է հարկավոր: Աստծո Խոսքում ուտեստեղենի մասին շատ ակնարկներ կան: Մեր նախամայրը՝ Եվան, հրապուրվեց արգելված ծառի պտուղով, և ուտելով այն՝ մեղանչեց Աստծո դեմ: Իսրայելացիներն անապատում Տիրոջ հայթայթած մանանայով և լորամարգիներով սնվեցին քառասուն տարի: Հիսուսն էլ Իր աշակերտների հետ կերավ ու խմեց և Իր փառավոր հարությունից հետո ձկան սեղան պատրաստեց առաքյալների համար:

Այո՛, ֆիզիկական ուտելիքը կարևոր է մարմնի համար, սակայն հոգևոր սնունդն է, որ մեզ հավիտենականության համար է պատրաստում: Պողոս առաքյալն ասել է, որ մարմնի վարժությունը քիչ բանի օգտակար է, բայց աստվածպաշտությունը թե՛ ներկա և թե՛ ապագա կյանքի խոստումն ունի: Նույնպես մարմնական սնունդը ժամանակավոր է, իսկ հոգևորը՝ հավիտենական:

Ուստի երբ կարդում էի Պետրոս առաքյալի երկրորդ նամակը Աստվածաշնչի սերտողության ընթացքում, ուշադրությունս գրավեցին ութ բաղկացուցիչներ, որոնք երբ համախմբում ենք, հոգևորապես աճում ենք և Քրիստոսին ավելի լավ ենք ճանաչում:

Մա հոգեպարար կարկանդակ է, որը ճաշակելու է ամեն հավատացյալ: Այստեղ արժե մեկ վայրկյան կանգ առնել՝ բնութագրելու Պետրոսին: Չարմանալի չէ՞, որ այս պարզ ձկնորսի կյանքը հղկվեց, երբ ամեն բան թողնելով՝ Հիսուսին հետևեց, և այս անտաշ ժայռի կտորը դարձավ մարդկանց որսորդ: Ավետարաններում ծանոթանում ենք այս ինքնավստահ, արկածախնդիր և համարձակ առաքյալին: Նա հաճախ առաջ էր նետվում, երբ պետք էր սպասել: Քնեց, երբ պետք էր աղոթել: Խոսեց, երբ պետք էր լսել: Նա խիզախ էր, բայց անուշադիր: Ամենացավալին այն էր, որ իր Տիրոջն ուրացավ, երբ պետք է Նրան պաշտպաներ: Մակայն երբ լացով գղջաց, բազումողորմ Հիսուսը նրան վերահաստատեց հավատքի մեջ:

Հիսուս Քրիստոսի համբարձումից հետո՝ Պենտեկոստեի օրը, Մուրբ Հոգին իջավ առաքյալների վրա: Նրանցից բոլորը գորություն ստացան, սակայն Պետրոսը եղավ բոլորի խոսնակը, ու նրա քարոզչությամբ հազարավորներ ավելացան Քրիստոսի նորակազմ եկեղեցում:

Պետրոս առաքյալը ասել է, որ վերստին ծնված Աստծո զավակը նորածին մանկան պես բանական անխարդախ կաթ է փափագում: Նույն գիտակցությամբ իր երկրորդ նամակում Հիսուս Քրիստոսի այս համեստ ծառան ասել է. *«Մեզ են տրված ամենամեծ ու թանկագին խոստումները, որպեսզի սրանցով հաղորդակից դառնաք աստափածային բնույթին՝ փախչելով աշխարհի ցանկությունից առաջացրած սպա-կանություններից»*: Սրա համար պետք է ջանք թափենք հետևյալ ութ

կարևոր հատկանիշները գործադրելու մեր ամենօրյա կյանքում.

1. **Հավատք.** սա հոգևոր ծնունդի և աճի գլխավոր նախաքայլը և հիմքն է. *«Առանց հավատի անհնար է Նրան հանճենել»* (Եբր. 11:6): Մենք *«Շնորհով եք դուք փրկված հավատի միջոցով»* (Եփես. 2:8):
2. **Առաքինություն.** *«Ձեր հավատին առաքինություն ավելացրեք»*, - ասում է Պետրոս առաքյալը: Այս շատ կարևոր տարր է հոգևոր կյանքի վերելքի համար, որն ընդգրկում է բարեպաշտություն, համեստություն և պարկեշտություն: Մրա լավագույն ներկայացուցիչն է «առաքինի կինը», որի մասին հստակ բացատրություն է տալիս Սողոմոն Իմաստունն Առակաց 31-րդ գլխում:
3. **Գիտություն.** այսինքն՝ հմտություն, ճանաչում, մտքի պաշար: Առակագիրն ասում է. *«Իմ խրատն առեք և ոչ թե՛ արծաթ ու գիտություն՝ ընտիր ոսկուց ավելի: Քանի որ Աստված Իրեն հանելի մարդուն իմաստություն, գիտություն և ուրախություն է տալիս»* (Առակ. 8:10 և Ժող. 2:26):
4. **Ժուժկալություն.** Պետրոսը ասել է, որ գիտության վրա ժուժկալություն ավելացրեք: Սա նշանակում է կամավոր գրկում: Տեսնել և փորձության ջենթարկվել: Ժուժկալությունը Սուրբ Հոգու պտուղի մի մասնիկն է: Աստծո տնտեսը պետք է լինի *«հյուրասեր, բարեսեր, խոհեմ, արդար, սուրբ, ժուժկալ»* (Տիտ. 1:8):
5. **Համբերություն.** աստվածատուր և աստվածահանո բարեմասնություն է համբերությունը, որում պարփակված է Աստծո կամքին հույսով սպասելն ու դժվարություններին և փորձություններին տոկալը: *«Որովհետև ձեզ համբերություն է պետք, որպեսզի, Աստծո կամքն անելուց հետո, խոստումը ժառանգեք»* (Եբր. 10:36): Նույնպես պետք է *«համբերատարությամբ վազենք մեր առջև դրված մրցավազքը»* (Եբր. 12:1):
6. **Աստվածպաշտություն.** Պետրոս առաքյալն ուզում է, որ մեր հոգեշեն կարկանդակի վեցերորդ տարրը աստվածպաշտությունը լինի: Սա անհրաժեշտ է Աստծո հետ հաղորդակցվելու

համար: Մեր գոյապատճառը Տիրոջը պաշտելն է, Նրան գովաբանելը. *«Բողոք ժամանակներում Տիրոջն եմ օրհնելու, Նրա փառաբանությունը միշտ իմ բերանում է լինելու»* (Մատ. 34:1): Որպես ջանասեր հավատացյալներ՝ պետք է մեր անձն աստվածաշնորհի վարժեցնենք, քանի որ դա է երկնային մեծագույն շահավաճառությունը (Ա Տիմ. 4:7 և 6:6): Մեր Ստեղծչին ամբողջ էությանը սիրելը առաջին պատվերն է և նախապայմանը երկնքի թագավորությունը ժառանգելու:

7. **Եղբայրասիրություն.** Նախ Աստծուն սիրել, ապա ընկերոջը. սա է Հիսուսի պատվերը: Պողոս և Պետրոս առաքյալները նույնպես շեշտում են այս ճշմարտությունը՝ ասելով. *«Ըրար հանդես գլխից եղեք եղբայրական սիրով և պատվելիս միմյանց տվեք գերապատվությունը»:*
8. **Մեր.** այս բոլորի գլխավորը սերն է (Կող. 3:1): *«Եվ ամեն ինչից առաջ միմյանց նկատմամբ անկեղծ սեր ունեցեք, - շեշտում է փորձառու Պետրոս առաքյալը, - քանի որ սերը ծածկում է մեղքերի բազմությունը»* (Ա Պետ. 4:8):

Սիրելիներ՛, ձեզ հետ բաժնեկցեցի ութհարկանի հրաշալի հոգեպարար կարկանդակի պատրաստման բաղադրատոմսով: Երբ Պետրոս առաքյալի թելադրած օգտաշատ բաղկացուցիչները յուրացնենք, կլինենք պտղատու, աճող և քրիստոնյա առողջ հավատացյալներ, ոչ թե դատարկ և անպտուղ: *«Ուրեմն, եղբայրներ, առավել ջանք գործադրեցե՛ք, որպեսզի ձեր կոչումն ու ընտրությունը հաստատեք, և սրանք անելով՝ երբեք չեք ընկնի»*, - ասում է նա վստահությամբ:

Աճել փափագող հավատացյալը պետք է կտրվի կաթից և հաստատուն կերակուր փափագի, որպեսզի չափահասների շարքերն անցնի: Մեր ցանկալի գերագույն նպատակն է՝ *«Հասնենք հավատի միասնության և Աստծո Որդու ճանաչմանը, կատարյալ մարդ լինելու, Քրիստոսի կատարյալ հասակի չափն ունենալու... սիրով ճշմարտությունը խոսելով, ամեն բանում անեք Նրա՝ մեջ, որ գուլիսն է՝ այսինքն Քրիստոսի, Ումից բողոք մարմինը, հողերի միջոցով միացված և միահյուսված, յուրաքանչյուր մասի ներգործուն աշխատանքի չափով, աճում է և կառուցվում սիրո մեջ»:*

Հազարամյա սուրբ քաղաքը, Կենաց գետը և վերջին պատգամներ (4)

Նախորդ սերտողություններում նշեցինք, որ Տեր Հիսուսի գալուստը շատ մոտ է: Մա ակնհայտ է, քանի որ այս գրքում ներկայացված դեպքերը *«շուտով պետք է տեղի ունենան»*, և *«ժամանակը մոտ է»* (Հայտ. 22:6, 10): Ավելին՝ Հիսուսը երեք անգամ ասաց, որ շուտով կգա (Հայտ. 22:7, 12, 20):

Ակնհայտ է, որ Հիսուսը գալիս է որպես Փեսա, քանի որ Հոգին և Հարսը սպասում են Նրա վերադարձին (Հայտ. 22:17): Օգտագործելով Մատթ. 25:1-13-ի բառերը՝ արդյոք լսելո՞ւ ենք կոչը. *«Ահա՛ փեսան գալիս է, դո՛ւրս եկեք նրան դիմախորելու»*: Հինգ իմաստուն կույսերը պատրաստ էին և փեսայի հետ ներս մտան հարսանեկան խրնջույքի, բայց հինգ հիմար կույսերը չէին պատրաստվել, ուստի դուրս մնացին հարսանեկան խնջույքից:

Վերջապես, այս գրքի մարգարեության խոսքերին որևէ բան ավելացնելը կամ դրանցից որևէ բան պակասացնելն ամենախիստ դատաստանները կրեթի վերոնշյալն անողներին: Այսպիսով, նրանք, ովքեր թարգմանում են սուրբգությունը, մեծ պատասխանատվություն են կրում դրա ճշգրիտ իմաստը փոխանցելու համար: Մենք նաև մեծ պատասխանատվություն ունենք *«ճշմարտության Խոսքը ուղիղ բացատրելու»* համար (Բ Տիմ. 2:15):

Վերջաբան

Այս դասընթացների ընթացքում սովորեցինք Աստծո մասին, և թե ինչպես է Իրեն մեզ բացահայտում Աստվածաշնչի միջոցով: Սովորեցինք, որ Աստված մեծ Արարիչ է, ով ստեղծել է երկինքն ու երկիրը և բոլոր արարածներին, նաև մարդուն՝ Իր պատկերով: Աստծո նպատակը միշտ եղել է մարդկանց հետ բնակվելը հավիտենական Թագավորության մեջ:

Աստված մեզ չի ստեղծել որպես ռոբոտներ, այլ տվել է ազատ

կամք՝ գործադրելու Իր հավիտենական նպատակների համար գծված սահմաններում: Մենք տեսանք, թե ինչպես հրեշտակային բոլոր էակներից ամենագեղեցիկը՝ սատանան, ըմբոստացավ Աստծո դեմ՝ մեղքը բերելով տիեզերք: Նա այժմ սպասում է իր վերջնական կործանմանը, որպեսզի նետվի հավիտենական Կրակե լիճը:

Աստված պատրաստեց մի գեղեցիկ վայր՝ Եդեմի պարտեզը, և այնտեղ դրեց առաջին մարդուն՝ Ադամին և նրա կնոջը՝ Եվային: Աստված Ադամին ասաց, որ իշխի մյուս արարածների վրա և խնամի պարտեզը, նաև պատվիրեց պահել օրենքը՝ չուտել Բարու և չարի գիտության ծառից: Այնուհետև օձի կերպարանքով դիմակավորված սատանան խաբեց Եվային, ով ճաշակեց արգելված պտուղը և կիսեց այն իր ամուսնու հետ: Այսպիսով՝ *«Մեկ մարդով մեղքը աշխարհ մտավ, և մեղքով՝ մահը...»* (Հռոմ. 5:12):

Իհարկե, Աստված, ով ի սկզբանե գիտի վերջը, նախատեսել էր այս ամենը՝ աստվածության մեջ ունենալով Մեկին, ով կզբաղեցներ Ադամի տեղը՝ գլխավորելու նրա հավիտենական թագավորությունը: Այս Անձը հետագայում կհայտնվեր որպես Տեր Հիսուս Քրիստոս:

Իր վերջնական նպատակին հասնելու համար Աստված հաստատեց ժառանգների մի շարք՝ Աբրահամ, Իսահակ, Հակոբ..., և ազգ՝ Իսրայել, որոնց միջոցով ծնվելու էր Քրիստոսը: Նա ջնջել էր նաև մեղքի և դրա կործանարար հետևանքները: Եվ դրա հիմքը դրվեց Քրիստոսի կողմից, երբ Նա *«... Մեկ անգամ ընդմիջտ հայտնվեց՝ Իր անձի պատարագով մեղքը ջնջելու համար»* (Եբր. 9:26):

Աստծուն հակառակվող մարդը հաստատել էր կայսրություն կայսրության հետևից, և երբ Հիսուսին դատում էին, իշխում էր Հռոմեական կայսրությունը, բայց Իր հարցաքննության ժամանակ Հիսուսն ասաց. *«Իմ թագավորությունն այս աշխարհից չէ. եթե Իմ թագավորությունն այս աշխարհից լիներ, ապա Իմ ծառաները կկռվեին, որ Ես հրեաների ձեռքը չմատնակեմ, բայց հիմա Իմ թագավորությունն այս տեղից չէ»* (Հովհ. 18:36): Պիղատոսը՝ հռոմեացի կառավարիչը, թվում էր համոզված էր այս խոսքերի ճշմարտացիության մեջ, որոնք նա հրամայեց գրել խաչի վրա՝ Հիսուսի գլխավերևում. *«Հիսուս Նազուրեցի՝ հրեաների թագավոր»* (Մատթ. 27:37, Հովհ. 19:19):

Հավիտենական թագավորության հաստատման աստվածային ծրագրի առանցքային իրադարձություններն էին Քրիստոսի մարդեղացումը, զոհաբերական մահը և փառավոր հարությունը: Նրա կատարածի շնորհիվ Նրան կերկրպագեն հավիտյանս հավիտենից: *«Դրա համար էլ Աստված Նրան խիստ բարձրացրեց և տվեց մի անուն, որ բարձր է բոլոր անուններից, որ Հիսուսի անվան առաջ ամեն մի ծունկ խոնարհվի երկնքում, երկրի վրա և երկրի տակ, և ամեն լեզու խոստովանի, թե Հիսուս Քրիստոսը Տե՛ր է՝ Հայր Աստծո փառքի համար»* (Փիլիպ. 2:9-11):

Քրիստոսի թագավորություն մտնելու համար անձը պետք է համապատասխանի Թագավորի պայմաններին, որոնք են մեղքերից ապաշխարելը և Քրիստոսի Անձին ու գործին հավատալը: Պողոս առաքյալը գրել է. *«Որ մեզ ազատեց խափարի իշխանությունից և փոխադրեց Իր սիրելի Որդու թագավորության մեջ. ում մեջ ունենք փրկություն Նրա արյամբ, այսինքն մեղքերի թողություն»* (Կող. 1:13-14):

Երբ Քրիստոսն Ինքն Իրեն զոհաբերեց, նաև շատ առանձնահատուկ բան արեց. Նա Իր արյունով գնեց Եկեղեցին (Գործք 20:28, հմմտ. Եփես. 5:25): Նա գնաց՝ տեղ պատրաստելու բոլոր նրանց համար, ովքեր վստահում են Իրեն, և մի օր կվերադառնա՝ հափշտակելու այս Եկեղեցին, որը կազմված է լինելու Պենտեկոստեի օրից մինչև Իր վերադառնալու օրը Իրեն հավատացող հավատացյալներից (Ա Թես. 4:16-17): Հավատացյալների այս մեծ խումբը կոչվում է Գառան հարսնացու: Նա կդառնա Նրա կինը և հավերժ կբնակվի Նրա հետ (Հայտ. 19:7, 21:9): Հավատացյալների այլ խմբեր, ինչպիսիք են բոլոր նրանք, ովքեր մահացել են Պենտեկոստեի օրվանից առաջ, նույնպես հատուկ տեղ կունենան Հավիտենական թագավորությունում:

Հավատացյալների հափշտակությանն անմիջապես կհաջորդի յոթ տարվա նեղության շրջանը, երբ սարսափելի դատաստաններ կթափվեն երկրի վրա: Այս շրջանի վերջում երկինքը կժայթքի հաղթական երգով. *«Այս աշխարհի թագավորությունները դարձան մեր Տիրոջն ու Նրա Օծյալինը, և Նա թագավորելու է հավիտյանս հավիտենից»* (Հայտ. 11:15): Սրանից որոշ ժամանակ անց Տերը կգա Երկնքից՝ որպես

հզոր հաղթող, որին կհետևեն երկնքի զորքերը. «*Եվ Իր պատմունանի ու ազդրի վրա գրված էր. «ԹԱԳԱՎՈՐ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ՏԵՐ ՏԵՐԵՐԻ»*» (Հայտ. 19:16):

Այդ ժամանակ Տերը կթագավորի երկրի վրա 1000 տարի: Սա կլինի աննախադեպ խաղաղության, արդարության և բարգավաճման ժամանակ, և *«երկիրը լցվելու է Տիրոջ փառքի գիտությանը, ինչպես ջրերը ծածկում են ծովը»* (Ամբ. 2:14):

Այս փառահեղ թագավորության ընթացքում բոլոր չարիքները կճնշվեն, և վերջում Տերը կկործանի սատանային և նրա հետևորդներին, որոնց թույլատրված էր ապստամբել Իր դեմ. *«Ու երան երկրի ընդարձակության մեջ և սրբերի բանակն ու սիրելի քաղաքը չորս կողմից պատեցին. և երկնքից՝ Աստծուց կրակ իջավ ու կուլ տվեց նրանց, իսկ Բանաստեղծը, որ մոլորեցրել էր նրանց, զցվեց կրակի ու ծծունքի լճի մեջ, որտեղ գազանն էր և սուտ մարգարեն: Այնտեղ չարչարվելու են ցերեկ ու գիշեր, հավիտյանս հավիտենից»* (Հայտ. 20:9-10): Այնուհետև Նա կգլխավորի մեծ սպիտակ դատաստանի գահը, և վերջապես վերջին թշնամին՝ մահը, կկործանվի (Ա Կորնթ. 15:26):

Այն ժամանակ լինելու է նոր երկինք և նոր երկիր՝ արդարության տուն: Եվ Աստծո գահից բարձր ձայն է լսվելու. *«Ահա՛ Աստծո խորանը մարդկանց մեջ, և Նա նրանց հետ պիտի բնակվի, և նրանք Իր ժողովուրդն են լինելու, և Աստված Ինքը նրանց հետ է լինելու՝ որպես նրանց Աստված»* (Հայտ. 21:3): Պետրոս առաքյալը գրել է. *«Այս փրկության մասին էր, որ փնտրում ու զգուշորեն քննում էին մարգարեները, որոնք ձեր նկատմամբ եղած շնորհի մասին մարգարեսացան, քննելով, թե ո՞ր և ինչպիսի ժամանակի համար է ծանուցում իրենց մեջ եղող Քրիստոսի Հոգին, որ նախապես վկայում էր Քրիստոսի չարչարանքների ու դրանց հետևելիք փառքի մասին»* (Բ Պետ. 1:10-11):

ՎԵՐՁ

Աստծո սերը, աշխարհի ասելությունը Հովհ. 15

Եկե՛ք հիշենք Հովհաննեսի՝ իր նամակները և Ավետարանը գրելու նպատակը. «Այս ամենը գրեցի ձեզ՝ Աստծո Որդու անվանը հավատացողներիդ, որպեսզի խմանաք, որ դուք հավիտենական կյանք ունեք»: Աստված Իր մեծ սիրո համար Հիսուսին ուղարկեց, որպեսզի փրկի, վերականգնի ու առաջնորդի մեզ: Այս գլխում Հովհաննեսը խոսում է երեք հարաբերությունների մասին՝ որթի և ճյուղերի, բարեկամների ու վկաների:

Որթը և ճյուղերը

Որթը Իսրայելի խորհրդապատկերն է, բայց գրեթե միշտ՝ անհավատարիմ Իսրայելի խորհրդապատկերը: Այս որթը հատուկ էր Աստծո համար: Եսային նկարագրում է այն՝ որպես «ընտիր որթ» (Եսայի 5:2): Բայց Երեմիան տեսավ այն որպես «վայրենի որթի անպիտան ճյուղերու պես»: Աստված նպատակ ուներ այս որթի համար: Սաղ. 80:8-ը ասում է. «Եզիպտոսից մի որթատունկ դուրս բերեցի», բայց 16-րդ համարում ասում է. «Կրակով է այրվել, կտրվել է»: Սակայն իրականում Հիսուսն է ճշմարիտ, իրական, իսկական որթը՝ ի տարբերություն հրեա ազգի: Այս գլխում Տեր Հիսուսն Իր հետևորդներին ասում է, որ պարզապես այս ազգին պատկանելով՝ չեն կարող փրկվել: Միայն Հիսուսի հետ անձնական հարաբերությունը կփրկի անձին: Մտածե՛ք Հիսուսի բոլոր «Ես եմ»-ների մասին. Ես եմ Բարի Հովիվը, Կենաց հացը, Աշխարհի լույսը, հավիտենական Կյանքի դուռը, հարությունը և կյանքը, ճանապարհը, ճշմարտությունը և կյանքը: Նա ամենն է Իրեն ընդունողի համար: Փրկությունն ու կյանքի իմաստը միայն Նրա մեջ են:

Այժմ ուշադրություն դարձրեք 2-րդ և 5-րդ համարներին: Մենք այս որթի մեկ մասն ենք: Որթը, որևէ այլ որթ, ինչպես նաև այս որթը մեծ ուշադրության կարիք ունեն: Խաղողի որթը շատ փարթամ ու գեղեցիկ տերևներ ունի, բայց նման խտության մեջ տերևներն օգուտ չեն բերի: Նրանք գրավիչ տեսք ունեն, բայց ծածկում են այն

ճաղիկները, որոնք պտուղ պետք է տան արևի ճառագայթներին հանդիպելու դեպքում: Խաղողագործը պետք է մաքրի որթը, որպեսզի այն պտուղ տա: Սա քրիստոնեական կյանքի այլաբանությունն է, որը մատնանշում է Փրկչի հետ մեր ունեցած փոխհարաբերությունը: Նա պետք է կտրի ու մաքրի մեզ: Աշխարհում ապրելով՝ մեր կյանքը շատ բաներ է արտադրում, որոնք լավն են թվում, նույնիսկ գրավիչ, բայց իրականում խանգարում են մեր հոգևոր աճին ու օգտակար չեն Վարդապետին: Այսպիսով՝ Տիրոջը մոտ մնալը հրամայական է:

4-րդ համարում այսպես ենք կարդում. «Մնացե՛ք Իմ մեջ, և Ես ձեր մեջ»: Սա քրիստոնեական լիարժեք կյանքի գաղտնիքն է: Հիսուսը մեր օրինակն է: Ուշադրություն դարձրեք, թե որքան հաճախ էր Նա առանձնանում Իր Հոր հետ հաղորդակցվելու համար. «Եվ Նա ամառյի տեղեր էր քաշվում և աղոթում էր» (Ղուկ. 5:16): Սուրբ Հոգին Նրա վրա իջավ այնպես, ինչպես ուրիշի վրա երբեք չէր իջել, այնուամենայնիվ, Նա կարիք ուներ Իր Հոր հետ հաճախակի առանձնանալու: Մենք պետք է մեր կյանքն այնպես դասավորենք, որ ամեն օր կարողանանք ժամանակ տրամադրել աղոթքին, Նրա Խոսքը կարդալուն և Նրա առջև լուռ մնալուն:

9-10 համարներում կարդում ենք Որդու հանդեպ Հոր սիրո և Իր եղբայրների հանդեպ Որդու սիրո մասին: Այնուհետև 11-րդ համարում տեսնում ենք, թե ինչու Հիսուսը այդպես ասաց: Կա երկու պատճառ.

Առաջին՝ որպեսզի ուրախություն ունենանք: Գուցե լսել էք Ուիլյամ Ուիլյեմսի մասին, ով պայքարել է սոցիալական արդարության բազմաթիվ խնդիրների դեմ և իր կյանքի 46 տարին նվիրել Անգլիայում ստրկության վերացմանը: Նա տառապում էր աչքի թուլացնող հիվանդությամբ: Նա նաև ողնաշարի թեքություն ուներ և ստիպված մետաղյա ամրակ էր կրում՝ գլուխը բարձր պահելու համար: Սակայն այդ բոլորով հանդերձ իր դեմքից ուրախություն էր ճառագայթում: Նրա հուղարկավորության ժամանակ Ժոզեֆ Բրաունն ասաց. «Նա շատ կենսուրախ քրիստոնյա էր..., նրա արևը միշտ փայլում էր»:

Երկրորդ՝ որպեսզի սիրով աշխարհի գնանք: Սա ուրիշների համար գոհաբերական սեր է, ինչպես Հիսուսի սերը: Մենք պետք է աշխարհի գնանք ու պտուղ բերենք: Պետք է այնպիսի հաղորդակցության մեջ լինենք Նրա հետ Հոր միջոցով, որ Նա կարողանա մեր կյանքն օգտակար դարձնել Իր համար, ինչի արդյունում մնայուն պտուղ կբերենք: Մենք սա պետք է խնդրենք Նրանից, և սա այն է, ինչ Նա խոստանում է տալ: Ծառայության մեջ պետք է Նրա գործընկերները լինենք, Նրա դեսպանները, մարդիկ, որոնց Նա ուղարկել է:

Բարեկամներ (հմր 14)

Բարեկամները մուտքի իրավունք ունեն: Հին աշխարհում ստրուկը չէր կարող իր տիրոջը մոտենալ: Աբրահամն Աստծո բարեկամն էր (Բ Մնաց. 20:7): Հորն Աստծո հետ մտերմության մասին խոսեց (29:4): Նա նաև գիտեր, որ Աստծո մոտ Բարեխոս ունի, ով իր բարեկամն է: Մովսեսն Աստծո հետ էր խոսում, *«ինչպես մի մարդ իր բարեկամի հետ կխոսի»* (Ելից 33:11), թեև նա ինքը իրեն Տիրոջ ծառա կոչեց (Բ Օր. 34:5):

«Ոչ թե դուք Ինձ ընտրեցիք, այլ Ե՛ս ընտրեցի ձեզ և ձեզ սահմանեցի, որ դուք գնաք և պտուղ բերեք» (16): Մենք ընտրված ենք ոչ թե մեր, այլ Նրա և աշխարհի համար՝ որպես Նրա դեսպաններ: Արթուր թագավորի կյոս սեղանին արժանացած ասպետները ոչ թե արքունիքի շքեղությունը վայելելու համար էին, այլ հանուն իրենց տիրոջ սխրագործություններ կատարելու համար: Սա վերաբերում է նաև մեզ, ովքեր կանչված են Աստծո գործին ու Տիրոջ ծառայությանը: Դարձյալ կարդացե՛ք 16-րդ համարը:

«Եթե աշխարհը ձեզ ստի ...» (18): Մեր բոլոր ասածները ոգեշնչող ու մարտահրավեր պարունակող կոչ են: Բայց իրականությունն այն է, որ մարդիկ միշտ ընդդիմացել են Աստծո կոչին: Երբ Հովհաննեսը գրեց Հիսուսի այս խոսքերը, նա շատ լավ գիտեր, թե որքան ճշմարիտ էր սա Հռոմի իշխանության ներքո գտնվող քրիստոնյաների համար: Հիսուսն ասել է. *«Եթե աշխարհը ձեզ ստի, դուք գիտեք, որ այն ձեզ ստեղծեց արագ՝ Ինձ ստեղծ»* (Հովհ. 15:18): Սակայն չկար Հիսուսին ատելու որևէ պատճառ: Այն իրականացումն է Հին Կտակարանի մարգարեական խոսքի. *«Առանց պատճառի ինձ հետ թշնամա-*

ցածները թող չծիծաղեն վրաս» (Մադ. 35:19): «Առանց պատճառի ինձ ատողները գլխիս մագերից շատ են. ինձ կործանել ցանկացողները, նրանք, որ հանիրավի իմ թշնամիներն են, գորեղ են. ինչ որ չէի հափրշտակել, վճարեցի նրանց» (Մադ. 69:4):

Հռոմեացիները ասում էին քրիստոնյաներին, քանի որ նրանք ավելի բարձր հավատարմություն էին ցուցաբերում Քրիստոսին, քան Հռոմին: Նրանք չէին հրաժարվում իրենց պարտավորություններից որպես քաղաքացիներ, բայց ավելի բարձր հավատարմություն էին պահում Քրիստոսի հանդեպ: Հռոմին հավատարիմ լինելն ամենաբարձր բարիքն էր: Հռոմը ժողովրդից հավատարմություն չէր պահանջում, ժողովուրդն էր այդպես վարվում, քանի որ Հռոմն իրենց խաղաղություն, օրենք, անվտանգություն և բարգավաճում էր բերում: Ավելի ուշ կայսրերն իրենց ձեռքերի մեջ վերցրին այս իշխանությունը: Նրանք պահանջում էին, որ ժողովուրդն իրենց համարի Հալածանքը Հռոմի ոգին մարմնավորող անձինք և երկրպագի իրենց՝ որպես Հռոմի աստվածների: Յուրաքանչյուր հռոմեացի իր ստորագրությամբ հաստատում էր այս գաղափարը՝ խունկ մատուցելով Կեսարին ու արտասանելով «Կեսարը Տերն է» խոսքը: Բացի այդ՝ յուրաքանչյուր անձ ազատ էր՝ երկրպագելու նրան, ում ցանկանար: Բայց ոչ մի քրիստոնյա այդպես չէր անում: Թերևս այսօր էլ այդպես է: Մեզ հրապուրում են՝ ընդունելու, որ տնտեսագիտությունը և ժամանակի հոսանքին համընթաց գնալը մեզ համար փրկություն են: Բայց ոչ մի քրիստոնյա չի կարող համաձայնել այս մտքին, քանի որ Հիսուսին առաջին տեղն են տալիս իրենց կյանքում:

Եվ իհարկե, հասարակությունը չհասկացավ Քրիստոսի հավատքը, ուստի հավատաց ասեկոսներին ու սխալ պատկերացում ունեցավ քրիստոնյաների մասին: Ով տարբեր գաղափար ուներ, բախվեց ընդդիմության:

Ջոնաս Հենուեյն առաջին մարդն էր, ով Լոնդոնում հովանոց օգտագործեց, և նրան ծաղրեցին ու հետապնդեցին այս բանն անելու համար: Աշխարհն ասում է տարբերվելը: Աշխարհն ասում է անհամապատասխանությունը, և Հիսուսը ճիշտ դրան է կանչում մեզ: Մարդիկ ասում են բոլոր նրանց, ովքեր կարծես թե իրենցից ավելի

լավ կյանքով են ապրում: «Ինչպես ձեզ Կանչողը սուրբ է, դուք էլ ձեր ամբողջ վարքով սուրբ եղեք», - ասում է Հայրը: Սուրբ նշանակում է տարբեր, հատուկ նպատակ ունեցող, ընդհանուր կյանքից տարբերվող: Հովհաննեսն ասում է մեզ՝ կա՛մ Քրիստոսը, կա՛մ աշխարհը: Երկուսը միասին անհնար է:

Վկաներ (հմբ 26)

Սա մեր պատասխանատվությունն է Հոգու զորությամբ: Հիսուսը Հոր կողմից Իր Հոգին ուղարկեց, որպեսզի մենք կարողանանք վկայել: Սուրբ Հոգին վկայում է Հիսուսի մասին ճշմարտությունը, քանի որ Նա Հիսուսի Հոգին է մեր մեջ: Նա կգա մեզ մոտ, երբ մենք Քրիստոսին նվիրվենք: Հոռմ. 8:9-11-ը սովորեցնում է, որ Քրիստոսին ունենալ նշանակում է Հոգին ունենալ մեր մեջ: Ահա թե ինչու ենք ուզում Հիսուսի մասին վկայել. ««Հավատի միևնույն հոգին ունենալով, ինչպես գրված է. «Հավատացի, դրա համար խոսեցի»» (Բ Կորնթ. 4:13): Ինչո՞ւ պետք է պատմենք Հիսուսի մասին: Պարզապես այն պատճառով, որ ճանաչել ենք Նրան. «Որովհետև սկզբից և եթե Ինձ հետ եք եղել»:

Սա է Տեր Հիսուսի հետ ունեցած մեր հարաբերությունը. մենք Նրա կյանքի մասն ենք կազմում, Նրանով ենք աճում, Նրա բարեկամն ենք, Նրա բարության ու ողորմության վկան:

Դուկա՝ Փոլ Ուայթինգ



*«Ո՛վ արդար Հայր, աշխարհը չճանաչեց Քեզ, բայց Ես ճանաչեցի Քեզ,
և սրանք ճանաչեցին, որ Դու ուղարկեցիր Ինձ:*

*Եվ Ես Քո անունը հայտնեցի նրանց, և պիտի հայտնեմ այն, որպեսզի
այն սերը, որով Դու Ինձ սիրեցիր, նրանց մեջ լինի, և Ես՝ նրանց մեջ»:*

Հովհ. 17:25-26

Աղոթքի մեջ պարզամտություն

Մենք՝ հավատացյալներս, պետք է լավ ըմբռնենք, որ մեր Աստվածը հետաքրքրվում է մեր բոլոր կարիքներով այնպես, ինչպես հետաքրքրվում է հայրը: Նա մեր վիճակը և կյանքի բոլոր մանրամասնությունները նկատի է առնում, պատվիրում է մեզ մեր բոլոր կարիքներն աղոթքով Իրեն տանել: Չկա որևէ բան, որին չհասնի Նրա գորովությունը:

Տարիներ առաջ Սկովսիայի եկեղեցիներից մեկը Էբրդին քաղաքում հոգևոր ժողովներ էր կազմակերպել: Մոտակա թաղերից և գյուղերից բազմաթիվ հավատացյալներ այնտեղ էին հավաքվում: Տարիքով բարեպաշտ մի մարդ ոտքով գնում էր պաշտամունքի վայր և ճանապարհին հանդիպեց աստվածաբանության ուսանող երիտասարդի ու բարեկամանալով՝ նրա ճանապարհակիցը դարձավ: Նրանք, անտեսելով իրենց տարիքային տարբերությունը, մտերմացան, քանի որ շատ բաներում գաղափարակից էին: Ուրախ գրուցում էին դեպի իրենց նշանակետը քայլելիս:

Կեսօրին, մարգագետնին նստելով, ամեն մեկը իր բերած ճաշի տարան բացեց և ուտելուց առաջ փառք տվեց Աստծուն Նրա բարիքների համար: Հետո ծերունին առաջարկեց ճամփորդությունը շարունակելուց առաջ միասին աղոթել: Երիտասարդ ուսանողը նախ շփոթվեց, բայց համաձայնեց և ասաց, որ որպես ավագ եղբայր՝ նախ ինքն աղոթի: Ծեր հավատացյալն ընդունեց առաջարկը և սկսեց ամենայն պարզամտությամբ աղոթել՝ Աստծուն իր Երկնավոր Հայրը կոչելով: Երախտապարտ սրտով շնորհակալություն հայտնեց Նրան և երեք առանձնահատուկ խնդրանք հայցեց Նրանից:

Նախ՝ Տիրոջը հիշեցրեց իր լսողության ծանր լինելը և խնդրեց, որ եկեղեցու առջևի շարքում իր համար տեղ ապահովի, որպեսզի քարոզը լավ լսի և պատգամից օրհնություն ստանա: Եթե բեմի մոտ չլինեք, այդ ամենից կզրկվեք: Հետո Տիրոջն ասաց, որ իր կոշիկները շատ հնացած են ու քաղաքի փողոցներով քայլելիս անհարմարություն են պատճառում, ուստի խնդրեց մի գույգ նոր կոշիկ, քանի որ

գնելու դրամ չուներ: Ամենավերջում գիշերելու համար տեղ խնդրեց, որովհետև Էբրդինում ոչ ոքի չէր ճանաչում և չգիտեր՝ ուր գնա. պանդոկ գնալ էլ ի վիճակի չէր: Մինչ այդ ուսանողը, աչքերը լայն բացած, նայում էր ծերունուն: Նա կարծում էր, որ պետք չէ այդպիսի անիմաստ ու անարժեք բաներով Աստծուն նեղություն տալ: Բարձրյալին ուղղված խնդրանքները պետք է մեծ բաներ լինեն: Երբ աղոթելու հերթն իրեն հասավ, նա պերճախոսությամբ շարադրված աղոթք արեց, որ ավելի ճառի էր նման, քան աղոթքի: Այս անգամ զարմացողը ծերունին էր, քանի որ ուսանողն իր աղոթքում իր կարիքների համար բնավ ակնարկ չարեց երկնավոր Հորը:

Շարունակելով իրենց ճամփան՝ նրանք հասան եկեղեցի: Այդ պահին ժողովուրդը ներս էր մտնում: Քիչ ժամանակ հետո նույնիսկ կանգնելու տեղ չէր մնացել: Ուսանողը մտածեց. «Հիմա տեսնենք, թե ինչ պիտի պատահի մեր ծեր բարեկամին: Նա տեղ էր խնդրել առջևի շարքում: Աստված անելիք չունի՞, այս ծերուկին տեղ պահելու՞ վիտի գրադվի»:

Հենց այդ պահին մեկը դուրս եկավ, և ծեր հավատացյալը հրմըշտելով հագիվ կարողացավ դռնից ներս մտնել: Նա կանգնեց այնտեղ՝ մեկ ձեռքը ականջին դրած. ուզում էր լսել աղոթքը և պատգամի ամեն մի խոսքը: Երիտասարդ մի տիկին, որ առջևի շարքում էր նստած, հետ նայեց և նկատեց ծերունուն: Կինը, ժամկոչին կանչելով, ասաց.

- Հայրս ինձ ասել էր, որ մինչև քարոզը սկսելն իր համար տեղ պահեմ, և եթե ուշանա, տեղը ուրիշի տամ: Կարևոր մի գործ նրան արգելեց գալ: Խնդրում եմ գնացե՛ք և դռան մոտ կանգնած ծեր մարդուն, որ ձեռքը դրել է ականջին, այստեղ բերե՛ք: Մի քանի վայրկյանից ծեր մարդու առաջին խնդրանքը ամբողջությամբ պատասխանված էր:

Սկովտիայում հավատացյալներից ոմանք միշտ իրենց աղոթքի պահին ծունկի էին գալիս եկեղեցում, երբ քարոզիչն առաջնորդում էր, որոշներն էլ երկյուղածությամբ ոտքի էին կանգնում: Ծեր հավատացյալը, երբ ծնրադրած վիճակում էր, երիտասարդ կինը միշտ կանգնած էր: Երբ նա ներքև նայեց, տեսավ, որ ծերունու կոշիկները շատ հին և ծակ էին: Իր հայրը կոշկավաճառ էր: Պաշտամունքից հետո

շատ նրբանկատորեն մոտեցավ բարեպաշտ մարդուն և խնդրեց, որ իրեն ընկերանա մինչև իր հոր խանութը և այնտեղ իրեն մի գույգ նոր կոշիկ ընտրի՝ իրենց կողմից որպես նվեր: Նրա երկրորդ խընդրանքն էլ պատասխանվեց:

Իսանություն կինը հարցրեց.

- Գիշերը որտե՞ղ եք մնալու:

Ծերունին պատասխանեց.

- Դեռ չգիտեմ: Հայրս անշուշտ մի սենյակ կպատրաստի, բայց դեռ դրա որտեղ լինելը ինձ չի ասել:

Տիկինը մի պահ շփոթվեց, հետո բացականչեց.

- Օհ, դուք ուզում եք ասել ձեր Հայրը, այսինքն՝ Աստված: Լավ, կարծում եմ՝ այդ սենյակն այստեղ՝ մեր տան մեջ է լինելու: Մեր հյուրասենյակը պահել էինք վեր. Բլենգի համար, բայց այս առավոտ նրանից հեռագիր ստացանք, որ չի կարողանալու գալ: Այնպես որ դուք մեր հյուրը կլինեք:

Նրան երրորդ խնդրանքն էլ տրվեց:

Հաջորդ օրը ուսանողն ուզեց ստուգել, թե ինչպես դասավորվեց ծեր հավատացյալի օրը և հարցնելով տեսավ, որ Աստված նրա աղոթքին լիովին պատասխանել էր և շնորհել էր երեք խնդրանքները: Այս եղելությունը ապշեցրեց նրան և աղոթքի մասին ունեցած նրա թյուր գաղափարը փոխեց:

Աստված միշտ ուշադիր է Իր ժողովրդի արած աղոթքներին. Նա երբեք այնքան զբաղված չէ, որ նրանց ներկայացրած աղաչանքներն անտեսի: Ընդհակառակը՝ Նա հետաքրքրված է մեր կյանքի բոլոր մանրամասնություններով:

«Ոչ մի բանի մասին մի՛ մոտահոգվեք, այլ թող ամեն բանում աղոթքով, աղաչանքով և գոհությամբ՝ ձեր խնդրանքները հայտնի լինեն Աստծուն: Եվ Աստծո խաղաղությունը, որ ամեն հասկացողությունից վեր է, պիտի պահի ձեր սրտերն ու մտքերը Քրիստոս Հիսուսով» (Փիլիպ. 4:6-7):

Քաղված՝ «Չմայլելի դրվագներ» գրքից

Ո՞ՐԼՄ Կողմում ենք մենք

Մատթ. 16:21-28

Երբ Հիսուսն Իր աշակերտներին ասաց, որ իր մահը մոտենում է, Պետրոսը Նրան մի կողմ քաշեց և հանդիմանելով ասաց, որ այդպիսի բան երբեք Նրա հետ տեղի չի ունենա: Պետրոսի արձագանքը միանգամայն բնական էր այդ դժվար ու անխուսափելի բանի՝ մահվան հանդեպ: Թեև մենք գիտենք, որ բոլորս էլ մեռնելու ենք, սակայն այնպես ենք ապրում, կարծես դա մեզ չի սպառնալու:

Պետրոսը շատ էր սիրում Հիսուսին և չէր ընդունում այն միտքը, որ Նա շուտով մահանալու էր: Բայց Հիսուսը հենց այդ առաքելությանամբ էր աշխարհ եկել՝ մեռնել մարդկության համար. ոչ ոք և ոչինչ չէր կարող հետ պահել Նրան: Թեև Պետրոսի խոսքերը լավ մտադրությամբ էին ասված, սակայն դրանք Հիսուսին միայն ցավ պատճառեցին: Յուրաքանչյուր քրիստոնյա կանչված է ամեն գնով իր խաչը վերցնելու և մեր Տեր Հիսուսին հետևելու: Մակայն երբ այդ խաչը հայտնվում է մեր առաջ, մեր միջից մի ձայն աղաղակում է. «Ո՛հ հիմա: Հեռացի՛ր ինձանից» կամ «Ինչո՞ւ հենց ես»: Եթե դա ներքին ձայն չէ, ապա դա կարող է լինել մեր սիրելի ձայնը, ով փորձում է մեզ շեղել հնազանդության ճանապարհից: Իսաչը ինչ էլ որ լինի, այն պետք է կրել, թեև սատանան փորձելու է մեզ խանգարել: Հիսուսն Իր աշակերտներին ասաց. «Ի՞նչ օգուտ ունի մարդ, որ ամբողջ աշխարհը ստանա և իր անձը կորցնի. կամ ի՞նչ գին կտա մարդ իր անձը փրկելու համար» (Մատթ. 16:26):

Իմաստը պարզ է. եթե դու Աստծո կողմում չես, ուրեմն պարտված ես, և քո կյանքը աննպատակ է: Ի՞նչ է նշանակում Աստծո կողմում լինել: Ինչպե՞ս կարող ենք այնտեղ հայտնվել: Թովմասի համար դա կարևոր հարց էր այն բանից հետո, երբ Հիսուսը հարություն առավ գերեզմանից: Նա հարցրեց. «Տե՛ր, մենք չգիտենք, թե ուր ես գնում դու. ինչպե՞ս կարող ենք իմանալ ճանապարհը»: Հիսուսն այսպես պատասխանեց. «Ես եմ ճանապարհը, ճշմարտությունը և կյանքը, ոչ ոք չի գա Հոր մոտ, եթե ոչ ինձանով» (Հովհ. 14:6):

Հիսուսը մեզ ցույց տվեց Հայր Աստծուն և դեպի Նրան տանող ճանապարհը: Արդյո՞ք մենք Նրա կողմում ենք: Աստծո հետ փոխհարաբերություններում մենք մշտապես փոխվելու կարիք ունենք, իսկ Աստված չունի: Նա անփոփոխ է և միշտ մեր կողմում է:

Դավիթ թագավորն աղաղակեց. «Ո՛ր գնամ քո Հոգուց և քո երեսից ո՛ր փախչեմ: Եթե վերսևսամ երկինք, դու այնտեղ ես, և եթե դժոխքը փայթալովեմ, ահա դու այնտեղ ես: Եթե արշալույսի թևերն առնեմ և ծովի վերջի ծայրերում բնակվեմ, այնտեղ էլ քո ձեռքը կառաջնորդի ինձ, և քո աջը կպահի ինձ» (Սաղ. 139:7-10):

Մահվանից առավել մենք վախենում ենք Աստծուց, ով շարունակ հետևում, հետապնդում է մեզ և Իր կողմն է մեզ կանչում: Ոմանց համար կյանքի դժոխքը ոչ թե առանց Աստծո ապրելն է, այլ այն գիտակցումը, որ չեն կարող ազատվել Աստծուց: Մենք պետք է հիշենք, որ Աստված մեզ այնքան է սիրում, որ մեզ մահվան մեջ մենակ չի թողնի, ինեն դրանք թե՛ առօրեա-կան «փոքրիկ մահեր», թե՛ այն մահը, որը մեր կյանքի վերջին օրն է վրա հասնելու, մեր սիրառատ Հայրը մեզ մենակ չի թողնի: Նա մեզ հետ է ու մեր կողմում է: Բայց մենք չենք կարող գնահատել այդ հիասքանչ ճշմարտությունն ու դրանից ուժ ստանալ, մինչև չանցնենք Աստծո կողմը:

Վեր.՝ Հովսեփ Հովսեփյան



«Եղբայրներ՛ր, ես ոչ թե մի նոր պատվիրան եմ գրում ձեզ, այլ՝ հին պատվիրանը, որն ի սկզբանե ունեիք: Հին պատվիրանն այն խոսքն է, որ դուք ի սկզբանե լսեցիք:

Այսուհանդերձ ձեզ մի նոր պատվիրան եմ գրում, որ ճշմարիտ է Նրա մեջ և ձեր մեջ. բանի որ խավարն անցել է, ու ճշմարիտ լույսն արդեն փայլում է:

Նա, ով ասում է, թե լույսի մեջ է և ատում է իր եղբորը, նա դեռևս խավարի մեջ է»:

Ա Յովհ. 2:7-9

ACM-ը՝ Հայաստանում

«Նորածին մանուկների պես փափագեցե՛ք Խոսքի բանական և անխարդախ կաթը, որ դրանով աճեք» (ԱՊետ. 2:2):

Փառք ենք տալիս Աստծուն, որ տարիների ընթացքում Ավետարանը ոչ միայն քարոզեցինք աղքատներին, այլև շարունակեցինք շատերին քաջալերել, մխիթարել ու հաստատել Աստծո Խոսքում:

Մույն թվականի մայիսի 17-ին 14-19 տարեկան 11 գյումրեցի երիտասարդներ 3 օրով մեկնեցին Երևան: Խմբում կար 8 աղջիկ և 3 տղա: Գյումրիի մեր ծառայակիցները՝ Աշոտն ու Հասմիկը, առաջնորդում էին խմբին: Մարտունը, Անժելան և մեր կամավորներն Աշոտի ու Հասմիկի հետ միասին կազմակերպեցին ու աջակցեցին այս այցելության իրականացմանը: Այս ճանապարհորդության նպատակն էր քաջալերել միմյանց քրիստոնեական կյանքում՝ շեշտը դնելով քարոզչության և ուսուցման վրա: Հիմնական խոսնակը Մարտունն էր: Նա երիտասարդներին խրախուսեց՝ խոսելով քրիստոնեական աճի և Աստծո Խոսքի կարևորության մասին:

Խմբի անդամները երգեցողությամբ ու վկայություններով Տիրոջը ծառայեցին Երևանի Հայ եղբայրության եկեղեցու կիրակնօրյա պաշտամունքի ժամանակ: Նրանք այցելեցին Երևանի և հարակից տարածքների մի քանի տեսարժան վայրեր: Կար նաև մարզական գործունեություն:

Օրինված էինք՝ տեսնելով մեկ այլ գործունեություն՝ կապված Աստծո Խոսքի կարևորության հետ: Մոլորվայում գործող Christian Mission International Aid-ի մեր ընկերները Հայաստանում սկսեցին Աստվածաշնչի փոստային դպրոցի ծառայությունը: Երևանի «Փարոս» մասնաշենքի սենյակներից մեկը տրամադրեցինք CMIAID-ին՝ այս ծառայությունը կազմակերպելու համար: Մենք CMIAID-ի հետ շատ սերտորեն ենք գործել մի քանի առիթներով և փառաբանում ենք Տիրոջը նրանց ծառայության համար:

Առաքյալները շեշտում էին Աստծո Խոսքի և վարդապետության կարևորությունը: Պետրոսը քաջալերեց հավատացյալներին «քանական և անխարդախ կայր»-ը փափագել, իսկ Պողոսը հիշեցրեց կորնթացիներին. «Եղբայրներ, չկարողացա ձեզ հետ որպես հոգևորների խոսել, այլ՝ որպես մարմնավորների» (Ա Կորնթ. 3:1): Խոսքի քաջակերությունը էական է, և մենք փառք ենք տալիս Տիրոջը, որ ACM-ը կարող է սերտորեն համագործակցել տեղական եկեղեցիների և քույր կազմակերպությունների հետ:

Շատ աղոթք է պետք Հայաստանի երիտասարդների համար, մինչ նրանք դիմագրավում են աշխարհի ու մարմնի գայթակղությունները: Մենք փառք ենք տալիս Տիրոջը, որ օգնում է մեզ՝ շարունակելու մեր ծառայությունները:

Դուկա! Դանիել Ջեյմս

